

ՄԱՐՏ

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԲՆԱՇՐՁՈՒՄԸ

Նիւ-Էորը հրատարակուող «Չայն Հայրենեաց» թերթին սեպտեմբեր 9-ի թիւին մէջ Ուոթըրը քաղցն նամակ մը կը նկարագրէ մեր Մասնաճիւղին հրապարակային մէկ ժողովը, նախագահութեամբ Սարաճեան Յովսէփ եպիսկոպոսին և ի ներկայութեան ժողովրդի խումն բազմութեան։ Այդ նամակին հետեւեալ հատուածը կ'արտատպենք նոյնութեամբ։

«Վերջին ատենախօսն էր Գեր. Նախագահ Հայրը, որ հայրական զուարթ դէմքով մը ըսաւ. «Բոլորդ ալ կը խնդաք, ես ալ կը խնդամ ձեզի հետ։ Բայց զիտէ՞ք ինչո՞ւ։ Հիմա պիտի ըսէք թէ՛ հինգ տարի առաջ Հնչակեանները քարով, փայտով, նստարաններով կը վնասէին այս ժողովարահէն, ու այսօր զու Հնչակեաններու ժողովին կը նախագահես։ Այո՛, կը նախագահեմ եւ կը սիրեմ ներկայ ուղղութիւնը։» Յետոյ թելադրեց ներկաներուն որ ուժ տան ներկայ ուղղութեան, եւ վերջացուց խօսքը քանի մը հայրական խրատներ տալով։»

Ահա բարձրաստիճան եկեղեցական մը որ իրեն պըղտիւթիւն չի համարիր հրապարակաւ համակրանք յայտնել յեղափոխական մարմին մը որուն երբեմն յայտնի հաւաքուողն էր հանդիսացած. ու յեղափոխական մարմինը սիրայօժար կ'ընդունէ նախկին հակառակորդի մը բարեկամական աջակցութիւնը։ Այս իրողութիւնը մեզի կարգ մը նկատողութիւններ ընելու կը պարտաւորէ։

Ամէն անոնք որ անձնական ո՛ր եւ է նկատում զերծ ազգային ազատագրութեան դատին կ'աշխատին, կրնան իրարմէ տարբեր տեսութիւններ ունենալ. մինչեւ իսկ կարող են իրարու գլխովին հակառակող միջոցներու մէջ փնտռել իրենց նպատակին հասնելու լաւագոյն եղանակը. բայց կուզայ որ մը որ իրար կը գտնեն որոշեալ կէտի մը վրայ, նման զինուորական վաշտերու որոնք զանազան ճամբաներով թշնամին դէմը կը խրկուին եւ ճակատաւարութիւն մը պահուն ամենքը կը միաւորուին մէկ հրամա-նատարութեամբ։ Ահա ինչու համար ժամանակէ մը ի վեր է հետզհետէ կ'աւելնան ազգային գաղտնի աշխատող անհատներու եւ կազմակերպուած մարմիններէ ուսանց միջեւ մերձեցման մը յայտարար նշանները։ Սարաճեան Յովսէփ եպիսկոպոս այս նոր համախմբումին յայտարարութիւնը զործնականապէս բրած եղաւ, նախագահելով Ուոթըրի Հնչակեան գումարումին։

Իբրեւ մասնապայծառ եւ անվիճելի ճշմարտութիւն մը այլ եւս ընդունուած է թէ Յեղափոխութիւնը նպատակ մը չէ այլ նպատակի մը հասնելու միջոցը։ Ու մենք կրնանք բացարձակօրէն յայտարարել թէ նպատակը որուն ժամանել ատաղապրած է Յեղափոխութիւնը ո՛չ սահմանափակ թոյլով մը Հայերու փափաքը կամ երազանքն է, եւ ո՛չ ալ միայն արդի Հայոց ըզձանքը։ Այդ նպատակը նախորդ սերունդներէն մեզի փոխանցուած ժառանգութիւն մըն է, եւ ընդհանուր հայութեան սեփականութիւնը։ Պահպանողական Հայերը եւ յատաշղիմախները, կրօնամոլները

եւ ազատախոհները, կաթոլիկ ու աւետարանական եւ լուսաւորչական Հայերը, հայրենի հողին վրայ գտնուողները եւ արտասահմանեանները ամենքն ալ միաբան են Թիւրքիոյ Հայոց ահեղ կացութիւնը հիմնովին բարեփոխելու դաւանանքին մէջ։

Ու այդ դաւանանքը մեր օրերը չէ որ հռչակուած է Պաշտօնական շրջանակի մը մէջ միայն պարփակուելով, կրնանք ընդունիլ թէ Խրիսի պատերազմէն յետոյ հարբստահարութեանց համար Պատրիարքարանէն Դուռը յեղափոխուած թաքրիքները կը հաստատեն թէ մեր նախորդները կէս դար առաջ արդէն Թիւրքիոյ Հայոց վիճակը բարելոյցելու պէտքը զգացեր են։ Այդ պէտքին զոհացում չտրուելով պահանջումները աւելի բարձրաձայն հնչուեր են։ Այդ պահանջումներուն անընդհատ շարունակութեամբը ներկան անցեալին կը շղթայուի։ Եղթային առաջին օղակը Յեղափոխութեան սկզբնաւորութիւնն է։ Հարբստահարութեանց համար պատրիարքարանէն Դուռն զրուած առաջին թաքրիքը Յեղափոխութեան առաջին ազգական է որ հետզհետէ մինչեւ զոռումի պիտի հասնի։ Մեր յեղափոխական շարժումը առանց կանխագուշակութեան, առանց նախապատրաստութեան, առանց յատկազօրի ծնաւ եւ յառաջացաւ, պարզապէս պարագաներու ճնշումին ներքեւ։ Ինչ որ երէկ յանդիմանութիւն մը կը սեպուէր, յաջորդ օրը բնական բերմունք մը համարուեցաւ, ուրիշ ոչինչ։ Դար մը առաջ Հայոց պատրիարքները եւ ոչ իսկ կրնային մտաբերել մեզմ խնդրագրով մը Հայոց տառապանքները ահեղ սուլթաններուն հողաձուլութեանը ներկայացնելու յանդիմանութիւնը։ Դստուս՝ առաջին կէտին այդ յանդիմանութիւնը իբրեւ ամենապարզ պահանջում մը կը նկատուի։ Բայց Սարգիս, Դեմիւր, Պօղոս պատրիարքները անկարելի էր որ երեւակայէին թէ Հայաստանի հարստահարութեանց խնդիրը կրնան հրապարակաւ Ազգային ժողովի մը մէջ յուզել, եւ օսմանեան կառավարութեան պահանջուող ծրագիր մը ներկայացնել Հայաստանի բարեկարգութեանց համար։ Անբեւակալիչին պարզ իրականութեան մը վերածուեցաւ Խրիսեան պատրիարքի օրով։ Ժողովրդական Հայրիկը անընդունակ էր մտքէն անցնելու թէ Հայոց պատրիարքարանը կարող է Եւրոպայի մեծ պետութեանց ուշադրութիւնը եւ հողաձուլութիւնը Հայաստանի վրայ հրաւիրել, հրաւեր մը որ պատմամբութեան մարտադրութիւն պէս պիտի հնչէր։ Ներսէս պատրիարք երբ այդ հրաւերը կարգաց ոչ ոք մտքէն անցուց թէ ապստամբութեան զբօշը կը պարզէ Հայոց պատրիարքը։ Իսկ Ներսէս պատրիարքին միտքը կ'ապստամբէր զէնքի վիճող ժողովրդական յուզումով պահանջումներ ընելու պատահականութեան գաղափարին դէմ։ Եւ սակայն այդ պատահականութիւնը այսօր իրականութիւն մըն է, առանց ոչ ոք ապշեցնելու։

«Յեղափոխութիւն» բացատրութիւնը առանձնական է, կ'ընդլայնի եւ կը սեղմուի, բայց միշտ զեղծումի դրութիւն մը ջնջելու գաղափարը կը մարմնացնէ։ Երկրի մը վարիչները, եթէ հեռաւոր են, կրնան նշմարել Յեղափոխութեան գալուստը, եւ փոխանակ զիմադրումի զուր ջանքերու, ընդառաջ կ'երթան անոր, ուղղութիւն ցոյց կուտան, եւ հանգրուանէ հանգրուան հանգչեցնելով, բնաշրջումի ճամբէն կը յառաջացնեն։ Օսմանեան կառավարութիւնը եթէ Հայոց պատրիարքներուն ցոյց տուած ուղղութեամբը հետզհետէ մեր վիճակը լաւացնելու ջանար, հայկական խնդիր մը 1878ին չէր կրնար ծնիլ եւ զոյութեան իրա-

ւունք մը ստանալ ու զայն պահպանել։ Այդ ծնունդը ինքնին յեղափոխութիւն մըն էր։ Եթէ օսմանեան կառավարութիւնը Պերլինէն յետոյ զիտէր թէ 1870էն մինչեւ 1878 Հայաստանի բարեկարգութեանց պահանջուած օրքան զօրացած էր, կրնար այդ խնդրին փարբեր ուղղութիւն մը տալ բարենորոգումներու թուականի մը սկզբնաւորութեամբ։ Գործադրուած բարեկարգութիւնները անշուշտ չէին կրնար մեզի կատարելապէս զոհացնել, բայց եւ այնպէս Դուռն կողմէն Հայոց նպատատուր անօրինութիւններու մէջ հայասէր քաղաքականութեան մը գրաւականը պիտի տեսնէինք։ Հայ ազգը պիտի համոզուէր թէ օսմանեան իշխանութիւնը իրեն հպատակ Հայոց տկարացումն ու բնաջնջումը ծրագրած չէր։ Մեր վիճակին բարեկարգումը որքան որ ալ չափաւոր ըլլար բայց եւ այնպէս Դուռն բարեկարգողութիւնը նկատողութեան պիտի առնէինք, եւ երկրին իշխանութիւնը մեր թշնամին չհամարելով պիտի ջանայինք կայսրութեան զօրացմանը աշխատիլ, ժամանաւորապէս մեծ վտանգի մը դէմ պաշտպանուելու համար։ Այդ վտանգը վարէ մը ի վեր հսկայաքայլ կը յառաջանար։ Ռուսիոյ մերձեցումն էր դէպի մեր երկիրը, որուն մէկ մասը զբաւած ըլլալով միւս մասին տիրապետութիւնը ծրագրած էր։ Հայ ազգը Թիւրքիոյ մէջ թէ եւ ոռոտահպատակ Հայերէն շատ նուազ բարեկեցիկ ապրէր բայց անդին ազգայնութեան սպառնացող վտանգը տեսնելով անոնց նիւթական երջանկութեան նախանձող պիտի չըլլայինք։ Քրիստոնեայ ահազին պետութեան մը մէջ իբրեւ ազգութիւն հալելու վտանգին դէմ ինքզինքնիս ապահովագրել պիտի ուզէինք օսմանեան կառավարութեան աջակցութեամբ։ Փոքր-Ասիոյ քրիստոնեայ եւ իսլամ ժողովուրդները միաբանութեամբ Ռուսիոյ դէմ պատու պարուելու պիտի աշխատէին։ Տօղանդաւոր հայ քաղաքապետներու զպրոց մը այս քաղաքականութեան կը ձեռնարէր։ Բայց օսմանեան իշխանութիւնը ո՛չ միայն հայա-սիրական տրամադրութեան մը փոքր զբաւականը չտուաւ, այլ իր շահերը անտեսելով Հայերը ջնջելու քաղաքականութիւնը զօրացուց։ Երբ Թիւրքիոյ Հայերը իրենց ազգայնութեան համար ներկային վտանգը աչքերնուն առջեւ ունէին, այլ եւս չէին կրնար ոռոտացման մը ապագայ վտանգին վրայ խորհիլ։ Հայ ազգութեան թշնամին իրենց թիկն էր, իրենց զլիւնը վրայ։ Ինքնապաշտպանութեան հարկը անխուսափելի էր։ Ու հիմակ, շնորհիւ օսմանեան քաղաքականութեան, պատերազմական վիճակի մէջ ենք թրքական իշխանութեան դէմ։

Յեղափոխութեան առաջադրած նպատակը ամբողջ ազգին իղձն ու փափաքը կը ներկայացնէ. ամբողջ ազգն ալ ուրեմն պէտք էր որ Յեղափոխութեան գաղափարը ընդգրկելով Յեղափոխականներուն շուրջը հաւաքուէր։ Եւ իրաւ ալ եղաւ ատեն մը ուր հայութեան սիրտը աշխարհիս մէկ ծայրէն միւսը Յեղափոխութեան հետ բաբախցւ։ Սառունի խնդրին ծագումէն մինչեւ 93-ի կոտորածներուն ժամանակամիջոցը ամբողջ հայութիւնը յեղափոխութեան յարեցաւ։ Այդ թուականէն ետքը երեւցած ցրտութեան և մինչեւ իսկ թշնամութեան դէմ մենք չլայրացանք, և ոչ ալ սրտաւրով, կանչելով ժամանակ կորսնցնել ուղեցնինք։ Հոգեբանական ամէն երեւոյթ իր ներքին պատճառը ունի։ Յեղափոխութեան և ազգին մեծամասնութեան միջեւ բացուած անջրպետին պատճառները ուղեցնինք քննիլ եւ իմաստասիրել։ Աւելի վերին է ուրիշներուն յանցանքը ճանչնալ քան թէ իր անձնականները։ Մենք, զգալով մեր վրայ

ծանրացած պատասխանատուութեանց որչափութիւնը, ուղեցիները այդ հերձուածին մէջ յեղափոխականներու պատասխանատուութեան բաժինը նախ ճշգրիտ, եւ ապա խոստապահանք ըլլալ ազգէն: Երեք տարի է այս ուղղութեամբ կ'ընթանանք, կամաց կամաց հարթելով այն բոլոր շրջանները որոնք մէկ գաղափարի մը շուրջը ազգին միանալուն արգելք կ'ըլլան:

Ահա երբեք ճշմարտութիւն մըն է թէ Հայաստանի բարեկարգութեանց իրականացման միջոցներուն վրայ Հայոց անհամաձայնութիւնը մեծ գործադուլութեան մը համեմատութիւնները կ'առնէ: Հայաստանի պատին հոգածութիւնը եթէ սակաւաթիւ անձերու պաշտպանութիւնը վաշիւէ միայն, չկրնար իր գոյութեան իրաւունքը պահպանել աշխարհի առջեւ: Երբ ազգային պահպանութեան կոփը կը մղենք, յաջողութեան առաջին պայմանը հոծ միութեան մէջ փնտռելու ենք: Այդ միութիւնը որոշ գաղափարի մը եւ ծրագրի մը շուրջը կրնայ կեդրոնանալ: Օրմանեան իշխանութեան հետ ազգային յարաբերութիւնները այն վիճակին հասած են որ ամենափոքր գոհացում մը ընդունելու համար իսկ այնքան մեծ ուժ պարտաւոր ենք ունենալ որքան պէտք էր հիմնական բարեկարգութեանց տիրանալու համար: Ու նիւթական ուժը բարոյական ուժին ծնունդն է. թշնամին դէմ ազգի մը միաբանութիւնը իր ուժին եւ զօրութեան ապացոյցն է: Չարչարուող, մարտիրոսացող ժողովուրդ մը երբ իր պատրիարքովը եւ իր հոգեւորականներովը, իր արհեստաւորներովը եւ իր վաճառականներովը, իր մտաւորականներովը եւ իր տղէտներովը, իր հարուստներովը եւ իր աղքատներովը արդար պահանջումներու համար կը միաբանի, իր ձայնը զօրեղ կը հնչէ քրիստոնեայ աշխարհին ախանջին, եւ մտածել կուտայ թիւրքերոյ կառավարութեան: Նիւթական ուժը կը ծնի այս բարոյական ուժէն:

Ինչո՞ւ ազգային միաբանութիւն մը գոյութիւն չունի հայկական խնդրին շուրջը: Վասն զի ազգին միտքը շփոթած է, սիրտը խռոված: Հակայեղափոխական ձգտումին պատճառները քննած ենք առանց կաշկանդուելու կուտակեցական եսամոլութեան կամ առեւտրական կապանքներով: Մեր հայեցողքները ընդհանուր տեսութեամբ մը եղած են. զգացած ենք որ թէ՛ կուտակցութիւնները եւ թէ՛ անհատները իրենց գործերովն ու հրատարակութիւններովը յեղափոխութեան ձգտումին վրայ սխալ գաղափարներ ներշնչած են ու դեռ կը ջանան ներշնչել, ուստի եւ ազգն ալ յեղափոխական գաղափարէն կը խրաչի:

Ազգին նպատակը ինչ որ է, Յեղափոխութեան իսկական նպատակն ալ նոյնն է: Ինչ որ Հայոց պատրիարքները յանուն ազգին պահանջեցին, — հիմնական բարեկարգութիւններ որոնց գործադրութեամբը հայ ժողովուրդը թիւրքերոյ մէջ վատթար վարչութեան մը խոշտանգումներէն ազատի, Յեղափոխութիւնն ալ նոյն պահանջումը կ'ընէ. միայն թէ նպատակին հասնելու միջոցը ուժը կը համարի փոխանակ թաքրիքին: Բարեկարգութիւնները ո՛չ առանձնաշնորհալ պատակաբեղում համար կ'ուզուին, ո՛չ ալ մասնաւոր գործերու կարգադրութեան համար: Հայը որ դէռ ու չար կը համարուի այնքան իրաւունք ունի բարեկարգ վարչութեան մը որքան ազնիւ ու բարի ենթադրուածը: Կեղեքիչ հայ հարուստը իր իւրեք եւ կեանքը ապահովող կառավարութիւն մը ուղեւոր այնքան իրաւունք ունի որքան աղքատը եւ կեղեքեալը: Կրօնամուլը այնքան իրաւունք ունի իր տաճարին սրբութիւնը պաշտպանող իշխանութեան մը որքան աղատախոհը իր մտքին անկախութիւնը յարգողի մը: Յեղափոխութեան ճշմարիտ կոչումն է բարեկարգ վարչութեամբ մը ամէն հայու ազատութիւնը ապահովել: Մեր յեղափոխութիւնը ո՛չ թէ ընկերական այլ ազգային է: Ամենքս ալ, որովհետեւ հայ ենք, հաւասարապէս կը հալածուինք առանց ո՛ր եւ իւրաքանչեւ: Կուտակաւորն ու խոժանը այնպէս կը կողոպտեն հարուստ Հայը ինչպէս հարկահանները հազիւ հացի մը ստակ ունեցող Հայը. Հայը որ ջերմեռանդութեամբ իր խաչը կը պաշտէ՝ զայն պղծուած կը տեսնէ ամպարիշտ ձեռքերէ: Հայը որ իր միտքը կ'սուզէ ո՛ր եւ կ'աշխատում ազատ պահելու շղթայուած կը գտնէ ամենատղէտ պաշտօնեաներէ: Հայը որ իր ազգին վիճակին անտար-

բեր եսամոլ մըն է այնքան դիւրութեամբ իբր բաղաճական յանցաւոր բանտը կը նետուի ու կը չարաչարուի որքան անձնուէր յեղափոխականը: Ընկերական բարեկարգութեանց թուականը կը բացուի Ազատութեան յաղթանակէն յետոյ: Ուր Ազատութիւն չի կալ հոն Արդարութիւն չի կալ, եւ ուր Արդարութիւնը ապահովուած չէ, հոն ընկերական վերանորոգում չի կրնար կատարուիլ:

Յեղափոխութեան ճշմարիտ կոչումը քաջ ըմբռնելով մեր ծրագրերը ըստ այնմ բարեփոխած ենք. Հնչակեան կուտակցութիւնը զուտ ազգային ազատութեան դատին կը ծառայէ, իբրեւ ազգային յեղափոխական մարմին:

Այդ ծրագրէն նախ ջնջեցինք Ընկերավարութեան դաւանանքը: Մենք իբր հաւաքական մարմին անտեսական այդ դարոցին ո՛չ բարեկամն ենք, ո՛չ թշնամին: Շատ մեծ ու մարդասէր մտքեր բանտը դատակարգին բարեբաստութիւնը ընկերավարութեան մէջ կը տեսնեն. նմանապէս ուրիշ մեծ ու մարդասէր մտքեր ալ ընկերավարութիւնը ամենամեծ չարքի մը կը նկատեն: Ամէն հայ ազատ է մէկ կամ միւս վարդապետութեան յարկը, եւ կամ բոլորովին չէզոք մնալ: Ամերիկա եւ Եւրոպա աշխատող հայ բանտները իրենց շահերուն նկատառութեամբ կը գործեն:

Հակ-ընկերավարականները կրնան յեղափոխականները ըլլալ, եւ ընկերավարականները՝ հակա-յեղափոխականներ: Ընդհակառակն ալ կրնայ պատահիլ: Հայ գործարանատէրը եւ հայ բանտը կրնան հաւասարապէս աշխատիլ հայ յեղափոխութեան համար: Ինչ որ ակնհայտ է այն է թէ առ այժմ Հայաստանն ո՛չ գործարան կայ, ո՛չ բանտ: Եւ ո՛չ ալ հոգային ընկերավարութեան ասպարէզ կը տեսնուի: Հայաստան: Տեսնական մեծ խնդիրները բարեկարգուած երկրին մէջ կրնան յուզուիլ: Հայ ունեւոր դատակարգին մեծ մասը ընկերավարութեան վրայ որոշ գաղափար մը չունենալով կը կարծէ թէ յեղափոխութեան յաղթանակին հետեւեալը հարուստներուն անմիջական աղքատացումը պիտի ըլլայ: Իսկ լուսամիտ մաս մը տեսնելով թէ հայկական խնդրին ընկերավարական հարցերու հետ շփոթութիւնը ազգային դատին փնտած է Եւրոպայի մէջ, յեղափոխութեան կը թշնամանայ դիւանագիտական տեսակէտներով:

Հակալիբերական քարոզութիւնները զօր իբր յեղափոխական առաքեալ Հայաստան գացող թերուտ երիտաւորներէն ուսանել կը տարածեն ժողովրդին մէջ, եւ որոնց արձագանքները կը լսուին յեղափոխական անուն կրող թերթերէ ուսանել մէջ, հայ ժողովրդին ենթագրեւ կուտան թէ յեղափոխութեան նպատակը եկեղեցիներուն փակումը եւ կրօնքին ջնջումն է: Հայ ժողովուրդը կրօնքը խորապէս կը սիրէ: Այդ կրօնքին համար թափած արիւնքն շինուած է իր պատմութիւնը որուն հովանաւորութեանը ներքեւ կ'ապրի իբր ազգ: Զնշէ՛ կրօնքը եւ կը ջնջուի պատմութիւնը, անցեալը, ո՛ր եւ է նշանակութիւնը չունենար ներկան: Զնշէ՛ կրօնքը եւ Հայաստան բառը զուտ աշխարհագրական բացատրութիւն մը կը մնայ: Ոմանց հակալիբերական տարածումը մեծապէս փնտած է յեղափոխական դատին: Ու յանցաւորը անշուշտ յեղափոխութենէն ցրտացողներունը չէ:

Քաղցրեմի եւ դեղացի, հոգեւորական ու աշխարհական դատակարգերու խտրութիւնը նուազ աղիտաբեր չեղաւ յեղափոխական գաղափարին: Թշնամին երբ ջարդերը բռնա իրարմէ չանջատեց քաղցրեմի ու դեղացին, եւ կեղեցականն ու աշխարհականը: Ամենքս ալ հաւատարապէս կուտարուեցան: Ամենքս ալ իբր հայ իրենց փրկութիւնը պէտք է սպասեն յեղափոխութենէն: Ո՛չ որ կրնայ սրահանջիլ որ հայ եկեղեցականը, հայ քաղցրեմին համակրին յեղափոխութեան երբ ան դատակարգի ատելութիւն կը բարոզէ անոնց դէմ:

Ու այս ամէնուն վրայ անիշխանականութիւնը «բանիւ եւ գործով», ու հայկական դատը արհամարհելի կը գտնայ Եւրոպայի ու Ամերիկայի աչքին, հայ ժողովուրդը անշուշտ կը կատարի, կը բորբոքի անոնց դէմ՝ որ սուրբ ու նուիրական դատ մը կ'անպատուեն եւ կը սպաննեն:

Ազգային շրջանակին մէջ ուրիշ մեր ծրագրերը կ'ըլլաւ՝ Հայաստանի բարեկարգութեանց դատին հետ ուղղակի յարաբերութիւն չստեղծող ո՛ր եւ խնդրի չմիջամտել:

Հայութեան կրօնական խիղճը չվերաւորել. անիշխանական ո՛ր եւ է դաւանանքէ եւ գործէ հեռու մնալ. դատաւարներու միջեւ խտրութիւն չգնել: Յեղափոխութիւնը ամէն հայու բարեկամ, ամէն հայ Յեղափոխութեան բարեկամ: Այս է Ազգային Յեղափոխութեան նշանաբանը:



Յեղափոխութիւնը նախապատրաստուած ծրագրով մը չստեղծուեցաւ եւ չկազմուեցաւ, — ճիշդ ինչպէս հայկական խնդրը որ յատկապէս կանխամտածեալ խորհրդի մը ծրնունքը չէ, այլ դէպքերու բերմամբ կամաց կամաց բըռնեցաւ ազգին աղէտներէն: Տարիներու ընթացքի մէջ յեղափոխական գաղափարը եւ զգացումը անզգալաբար տիրած էին հայ սրտերու եւ մտքերու. ու երբ ժամը հասաւ, ահա հայ աշխարհին ամէն կողմը երեւան եկան երիտաւորներ, որոնք առանց իրար ճանչնալու, առանց իրարու հետ կանխապէս համաձայնութիւն գոյացնելու, սկսան շարժիլ եւ գործել միեւնոյն մղումին վարեալ: Յեղափոխական կանոնաւոր կազմակերպութեան մը սկզբնաւորութիւնը 1890էն կը թուագրուի: Այդ ժամանակ Յեղափոխութեան կեդրոնը Տրապիզոն էր, բայց իրարու յաջորդող դէպքերը այդ քաղաքը յեղափոխականներէ դատարկացուցին, մինչ ուրիշ յեղափոխականներ երկրին ամէն կողմը կը գործէին: Եւրոպա դանուող ընկերները այդ պարագաներուն մէջ կեդրոնի մը հեղինակութիւնը ստանձնեցին եւ անկախ ազատութեամբ գրեցին ու գործեցին: Այն յեղափոխականները որ Սասուն, Մուշ, Վան, Գաղատիա, Մարզուան, Զէյթուն, Պալիս կը կոռէին, կը ձերբակալուէին, կը բանտարկուէին, բնականաբար կարող չէին առանձինն առանձինն ո՛ր եւ ազգեցութիւն ունենալ Եւրոպայի վրայ. կը շարունակէին յեղափոխական գործը, գրեթէ իրարու հետ առանց յարաբերութեան: Բայց եկաւ օր մը որ ամենքն ալ իրար գտան: Մեր ազգային պատմութեան մէջ եզական դուռարում մըն էր 1896ին Լոնտոնի յեղափոխական առաջին ընդհանուր ժողովը որ կը բաղկանար երկրին ամէն կողմը գործող յեղափոխականներէ: Հայութեան մանրանկարն էր: Այդ յեղափոխականները, ազգին սրտէն ծնած, սքանչելապէս կը ճանչնային իրենց մայրը. ու երկար տարիներու փորձառութեամբ դիտելին թէ ի՞նչ էր հայ ազգին հոգին, մտածումները, զգացումները: Ուղեցին դարմանել գոնէ իրենց բաժնին ինչ կամ սխալները որ իրենց բացակայութեանը գործուած էին Եւրոպա յանուն ընդհանուր Յեղափոխութեան: Բարեշնչումը այդ օրէն կը սկսի եւ հետզհետէ կը պատրաստէ յեղափոխութեան համար ամրապինդ կուտան մը:

Ճիշդ այն պահուն, 1896 օգոստոս-սեպտեմբեր, մինչ յեղափոխական ժողովը Լոնտոն գումարուած էր, հայ ազգին վրայ նորանոր գործադրութիւններ կը ծանրանային: Յեղափոխական գործութիւն մը չէր կրցած Պալատի ժողովները եւ առնները կուտարուող Հայոց ամենաթիւթեւ օգնութիւն մը հայթայթել. մայրաքաղաքին մէջ ջարդերը դադարեցնելու նպատակաւ եւրոպական միջամտութեան մը դանդաղութիւնը անգամ մը եւ կը հաստատուի Հայոց նկատմամբ քաղաքականութեան աննպատակ արամադրութիւնները, տարիէ մը ի վեր արդէն անտարակաւելի. կրկնակի յուսախաբութիւնը վերջին ամենածանր հարուածը կուտար յեղափոխութեան վրայ ժողովրդին երբեմնի հաւատքին: Յեղափոխութիւնը գործութեան գաղափարը կը մարմնացնէ, ուժը երբ չի յաղթանակիր, իր հմայքը կը շփոթանայ, եւ ոչ ոք այլ եւս յուսալիւ ակնկալող կը մնայ անոր: Լոնտոնի յեղափոխական ժողովը կը գտնուէր ուրեմն հանգիւյ կաւարուած այնպիսի իրողութեանց սրտը յուսահատութեան մերձեցող կացութիւն մը ստեղծած էին: Երկու տարուան իրարու յաջորդող ծանրածանր դէպքերը պէտք էր կա՛մ Յեղափոխութեան վերջնական պարտութիւնը համարել հակառակաբարկան պատերազմին մէջ, կա՛մ միայն բանի մը ճակատամարտներու կորուստը զոր դարմանել միշտ հնարաւոր է: Կա՛մ զինամթափութիւն, կա՛մ յարատեւութիւն: Վարանումը եւ սչ իսկ իբր աննշմարելի ստուեր մը սակեցաւ յեղափոխականներու մարքին առջեւէն: Անուշ կըլու-

ուին շարունակութիւնը վճռուեցաւ առանց տարակուսանքի արտայայտութեան մը։

Հիմակ ազգին յեղափոխական ուժերը ամենքն ալ հայ աշխարհին չորս անկիւնը ցիրուցան պատերազմողներ չէին։ Յեղափոխական ներկայացուցիչները մէկտեղ եկած էին բազմապաշար փորձառութեամբ։ ու օր մը, անյաջողութեան կամ նոր դժբաղդութեան մը պարագային՝ ոչ ոք պիտի կրնար արդարանալ առարկելով թէ ընդհանուր ծըրարներն պատրաստութեան վրայ ազդելու անկարելիութեան դատապարտուած էր։ Առանց բարբոքման ազդեցութիւնը կրելու, հանդարտ մտքով պատրաստուած յեղափոխական ծրագրէ մը ապագային փրկութիւնը յուսալ կարելի էր։ Հայ ժողովրդին հոգեբանական իմաստասիրութիւնը, Հայաստանի իրական կացութեան ստոյգ տեղեկութիւնը, օսմանեան իշխանութեան տկար ու զօրաւոր կողմերուն քննութիւնը, Թիւրքիոյ նկատմամբ Եւրոպայի քաղաքական ձգտումին հետամտութիւնը անկէ ի վեր յեղափոխական ծրագրին ուղեցոյցը եղան։

Այդ ծրագիրը ազգը շարունայու յատկութիւններէն զուրկ էր եւ զուրկ կը մնայ։ Թէ՛ անհատներու եւ թէ՛ կուսակցութեանց համար շատ աւելի հեշտ է, եւ շահաւէտ ալ, ժողովուրդ մը բարբոքել՝ առանց հետեւանքներու մասին ո՛ր եւ է հոգ մը քաշելու, քան թէ մեծ վտանգներու ի նախազգուշութիւն ինքնազսպումի հրաւերել։ Ու հիմակ կը տեսնենք թէ հայ ժողովուրդը ո՛չ թէ յեղափոխութիւնը ատամ է, այլ հակա-ազգային ուղղութեան մը թշնամին եղած է։ ու պիտի միանայ յեղափոխական գաղափարին շուրջը երբ Յեղափոխութիւնը հայու սրտին, հայու հոգուն, հայու մտքին լուստփայլ ու տիրական ցուցումն է, երբ Յեղափոխութիւնը դարեւրոտ ստեղծած Հայաստանին ազատագրութեանը անձնուէրն է։

Յեղափոխութիւնը՝ այսինքն բարոյական ու նիւթական ուժին դաշնակցութեամբ հայութիւնը փրկելու միակ զօրութիւնը, կը տկարանայ, կը չքանայ երբ իր կեանքը անհատներու կեանքին հետ կապուած է, երբ գաղափարը ամբողջ ազգինը չէ այլ կուսակցական մենաշնորհ կը համարուի։ Հայկական խնդիրը շատոնց մեռած ու թաղուած պիտի ըլլար եթէ Խրեմեանի մը, Ներսէսի մը կեանքին հետ կապուած ըլլար, կամ կուսակցութեան մը պաշտպանութիւնը վայելէր միայն։ Յեղափոխութիւնը կամ պիտի մեռնի, իրեն հետ գերեզման տանելով ազգին ամէն յոյսերը, կամ ազգային դրօշակին ծալքերուն ներքեւ պիտի միացնէ ամբողջ հայութիւնը դէպի յաղթանակ։ Եւ երբ կը սկսին երեւան գալ Սարաճեաններ սրտնք առանց ո՛ր եւ է յեղափոխական շրջանակի պատկանելու դուռ հայրենասէրներն են, եւ կը մոռնան անձերն ալ, անուններն ալ, սխալներն ալ, եւ միայն Գաղափարը կը տեսնեն, զայն կը յարկեն, անոր կ'ուզեն սպասարկել, կրնանք զուշակել թէ ազգային միաբանութեան մը թուականը բացուելու վրայ է, Ազգային Յեղափոխութեան գաղափարին հալածանքութեամբը։

ՎԱՂՈՒԱՆ ԱՊԱՆՈՎՈՒԹԻՒՆԸ

Օրմանեան Պատրիարքին արդի ընթացքը բազմադիմի մեկնութեանց առիթ կը հայթայթէ։ Բարձրատիման եկեղեցականին ուղղամտութիւնը ամէնուն համար երաշխաւորեալ չէ։ Կը կատկածուի թէ Պատրիարքարանին և կառավարական շրջանակներու միջեւ նախապէս համաձայնութիւն մը գոյացած է արտասահմանի Հայոց յուզումը հանդարտեցնելու եւ Պոլսոյ ամբողջութիւնը չափաւորելու նպատակաւ։ Գուցէ ճշմարտութիւն, թերեւս զրպարտանք։ Բայց եթէ պատրիարքը ուղղամտութեամբ կը գործէ, իրեն դէմ անիրաւութիւնը հետեւանքն է եռամեայ ոլոր մուրը քաղաքականութեան մը որ աւելի Երլարդի նկատումներուն համաձայն էր քան թէ Հայոց շահերուն։ Ու երբ յուլիս 11 ՁՅի նախատական հարուածին իբր պատասխան թիւր-

քիոյ Հայոց բարձրագոյն ներկայացուցիչը փոխանակ կտրուկ վերջնադրով մը քաշուելու, բաւական կը համարէր Պատրիարքութիւնը Գուլ-Գաբուի պաշտօնատունէն Թաքսիմի իր անձնական բնակարանը փոխադրել, եւ թաղութիւնները կրնան աղատ ասպարէզ գտնել։ Սակայն ինչ որ ալ ըլլայ, մենք չենք ուզեր կասկածանքի շուրջը դեղերել, մինչպէս իրողութիւն մը կայ, ու հանրային մը տաժութիւնը ան պէտք է գրաւէ։ Իրողութիւնը՝ Հայոց պատրիարքին պահանջադրին է, և պաշտօնապէս առանձնացումը։

Այդ իրական իրողութիւնը կրնայ նախ եւ առաջ համաձայնութեան գիծ մը երկարել երկու հակակարծիք համախմբումներու միջեւ։ Անոնցմէ մէկը՝ Հայաստանի միեւակին ծանրութեանը թէ և քաջատեղեակ, բայց դարմանին համար պատրիարքական անգործութիւնը նկատողութեան առնելով խտապահանջութեան հարկ չէր տեսներ։ Միւսը ընդունելով հանդերձ թէ Պոլսոյ պատրիարքը չի գտնուիր 1895ի առաջին ամիսներուն մենաշնորհալ դիրքին մէջ, երբ հայկական խնդիրը Եւրոպայի օրուան մտադրանքութեան առարկան էր պետութեանց ուղղակի միջամտութեամբ, կը փափաքէր պատրիարքական ազդեցիկ բողոքարկութեան մը, որ անմիջապէս բարենորոգումներու պէտքը պիտի շեշտէր, շնորհիւ այն հեղինակութեանը զոր Թիւրքիոյ Հայոց պաշտօնական ներկայացուցիչը միշտ Եւրոպայի առջեւ կը վայելէ։ Հիմակ որ պատրիարքը այս ճամբուն մէջ առաջին քայլ մը առած է, պէտք չունինք ներքին դիտաւորութեանց փնտռութիւն լարելին։ Թոյի մը մէջ մտրելու։ Պատրիարքական նոր ուղղութիւնը ազգային գաղտնի օգտակար ընծայելու ջանադրութիւնը մեղի կը բաւէ։ Հայոց պատրիարքին պահանջագիրը եւ մեկուսացումը համաձայնութեան կոտորել կը հարկ թէ պատրիարքներու եւ հակապատրիարքեաններու միջեւ։

Երկու իսլամ եւ մէկ հայ բարձրաստիճան անձնաւորութիւնները կազմուած յանձնաժողովի մը կազմութիւնը նշանակութիւնը զուրկ չէ, եւ կամ՝ հարկ է աշխատել նշանակութիւնը մեծցնելու։ Արդարեւ ընթացիկ ճշմարտութիւն մըն է թէ այդ տեսակ յանձնաժողովներու կազմութիւնը ժամանակ շահելու խաբէպատիր միջոց մըն է։ Սակայն ամէն ատեն որ պալատը միջոց մը փնտռէ որպէս զի ժամանակ վատտի, կրնանք ենթադրել թէ ստիպողական հարկէ մը կը մղուի։ Արդ չորս տարի է որ թէեւ ամենածանր դէպքեր պատահեցան, բայց Երլարդի պալատը չիփոխեց Յանձնաժողովի մը կազմութեամբ Եւրոպան ու Հայ ազգը խաբելու։ Հաւանորէն հեռաւոր կամ մօտալուտ ծանր կամ լիթիմ վտանգներու նախատեսութեամբն է որ կառավարութիւնը այդ լքեալ քաղաքականութեան վերադառնալ կը հարկադրուի։

Բայց նորէն պիտի խաբուինք։ Գուցէ։ Միայն թէ երբեք չմոռնանք որ քաղաքական աշխարհին մէջ իսկ բողոք յանցատուր չի սեպուիր, այլ խաբուողը։ ո՛չ պատրիարք, ո՛չ վարչապետ կարող են, եթէ մինչեւ իսկ ըղձան, ազգին միտքը մուրընթաց ճամբաներով շուարեցնել, եւ ատենուան մը համար եւս հայաստան քաղաքականութեան յաջողութիւն ապահովել, եթէ մենք խաբուիլ չտրեցնք։ Երբ հայ ազգին եւ օսմանեան կառավարութեան փոխադարձ կացութիւնը յստակ տեսութեամբ քննելով, պատրիարքն ու վարչութիւնը իրականութեան հետ դժուարէմ բերենք, անոնց առջեւ փախուստի ամէն ճամբայ կտրած կ'ըլլանք։

Իրականութիւնը որոշապէս տեսնելու համար պէտք է նախ գիտնալ թէ սուլթանին հրամանաւր կազմուած յանձնաժողովը ինչ պիտի քննէ։ Պաշտօնական պատասխանն է՝ «Հայոց փափաքները»։ Ինչ են այդ փափաքները, որոնք պատրիարքին կողմէ սուլթանին մատուցուած պահանջագրի մը՝ կամ ըստ պալատական բացատրութեան՝ խնդրագրի մը մէջ ամփոփուած են։ Այդ պաշտօնադիրը հրատարակուած չըլլալով անկարող ենք պատրիարքական առաջարկները կատարեալ գիտակցութեամբ դատել։ Բայց այդ «փափաքներէն» երկուքը շատոնց է տիեզերահոշակ են, իբր բարեկարգութեանց «վէժանկեանները»։ անոնց քննութիւնը կը բաւէ խնդրին ամբողջութիւնը ընդգրկելու։

Պատրիարքը քաղաքական «յանցանքով» բանտարկեալներու ազատութիւնը, եւ երկրին ամէն կողմը Հայոց անարգել երթեւեկութեան արտօնութիւնը կը խնդրէ։ Դիւրութեամբ կրնայ ընդունուիլ թէ այս փափաքներուն իրականացմանը դէմ ո՛ր եւ է լուրջ դժուարութիւն չի կայ։ Անոնք ո՛չ սուլթանին վեհապետական իրաւունքներուն բռնաբարում մը կ'ենթադրեն, ո՛չ իսլամական անձնասիրութիւնը վերաւորելու կը ձգտին, եւ ոչ ալ դրամական զուհոլութիւն կը պահանջեն։ Եւ սակայն այդքան նպաստաւորեալ պայմաններով շրջապատուած երկու պարզ եւ անմեղունակ փափաքները բարեկարգութեանց ամբողջ խնդրին դժուարութիւնները կը ներկայացնեն։ Ո՛չ սուլթանը կարող է այս առաջարկներուն հաւանիլ, եւ ո՛չ ալ՝ հաւանութեան պարագային՝ հայ ազգը կրնայ ո՛ր եւ է մեծկակ գոհունակութիւն զգալ։ Պատմական յետադարձ ակնարկ մը այս ճշմարտութիւնը կը հաստատէ։

Հայոց համար քաղաքական բանտարկութեան թուականը 1880-81ին կը բացուի, Էրզրում յեղափոխական մարմին մը դոյութեամբը։ Այդ մարմինն պատկանողները ձերբակալուեցան, դատուեցան և բանտարկուեցան։ Ատկէ ետքը կառավարութիւնը Հայոց նկատմամբ աւելի կասկածոտ երեւցաւ։ Մինչեւ 1890 Հայաստանի ամէն կողմը բայց մանաւանդ Վան, Մուշ, Էրզրում, խաղաղութիւն, ձերբակալութիւն, բանտարկութիւն, աքսոր կառավարական դրութեան վերածուեցան։ Բայց այդ տասը տարուան ժամանակամիջոցին մասնակի մոռացումներ, կամ ինչպէս պաշտօնական լեզուով կ'ըսուի ներուճներ եղան, մասնաւորապէս Էրզրումի առաջին բանտարկեալները Ներսէս պատրիարքին միջնորդութեամբ արձակուեցան։ Գուլ-Գաբուի ցոյցէն ետքը հայ Յեղափոխութիւնը մարմին մը առած երեւցաւ։ Խոտութիւնները աւելի շատցան, եւ Հայաստան, ու հիմակ ալ Պոլիս, ձերբակալութիւն, բանտարկութիւն, աքսոր օրուան սովորական դէպքերը դարձան, կախաղանի յաւելումով, ու շարունակուեցան մինչեւ 1895։ Սակայն այդ հինգ տարուան մէջ նորէն ներուճներ հոշակուած էին, յատկապէս 1891ին սկիզբները։ Հայկական խնդրին հզօրացումը 1895ին շատ ընդարձակ սահմանի մէջ ներդրութիւն հրատարակուեցաւ։ մահուան դատապարտեալներն իսկ ազատ արձակուեցան։ Եւ սակայն այդ մոռացումէն անմիջապէս յետոյ տասնեւհինգամեայ դրութիւնը նորէն շարունակուեցաւ, մինչեւ 1896ի վերջերը, երբ նորէն ներում հրատարակուեցաւ։ Երչ ետքն ալ նորէն ձերբակալութիւն, բանտարկութիւն, աքսոր, կախաղան Հայոց բաժինն եղած են եւ կը մնան մինչեւ այսօր։ Հետեւաբար եթէ այս շաբթու ընդհանուր մոռացում հրատարակուի, դալ շաբթու ընդհանուր ձերբակալութիւնները պիտի սկսին։ Ո՞վ պիտի տայ ազգին վաղուան ապահովութիւնը։ Ահա ինչ որ կը պահանջուի։ Պատրիարքը անկարող է ազգին երաշխաւոր ըլլալ վաղուան համար։

Եւ սուլթանն ալ ընդհանուր մոռացում չի կրնար հրատարակել։ Պատրիարքը չի կրնար ազգին կողմէն վաղուան համար սուլթանին երաշխաւոր ըլլալ։ Եւ արդարեւ սուլթանը իր նշանակած յանձնաժողովին միջոցաւ պատրիարքին պիտի առարկէ թէ՛ «Ահաւասիկ 1882էն մինչեւ 1896 պարբերաբար ներուճներ շնորհեցի, բայց Հայերն ալ երբեք հանգարտ չմնացին, եւ ներեալները ընդհանրապէս ստուար թիւ մը կը կազմեն նոր ձերբակալուող յեղափոխականներու բազմութեան մէջ։ Պատրիարքը կրնայ վստահօրէն ապահովութիւն տալ թէ ներումէն անմիջապէս յետոյ ծանր դէպքեր պիտի չպատահին»։ Ո՛չ։ Հայոց բարձրագոյն իշխանութիւնը դրական կամ նոյն իսկ հաւանական ո՛ր եւ է խոստում մը բերնէն հանելու անկարելիութեան դատապարտուած է։ Ուրեմն Յանձնաժողովը ինչպէս իր պատրաստելիք ծրագրին մէջ ընդհանուր մոռացումի մը առաջարկը ներկայացնելու ներուճները յանձն առնէ, եւ ինչպէս սուլթանը իր հաւանութիւնը այդպիսի առաջարկի մը տայ։ Իսկ ազգին համար՝ այսօրուան ներումը վաղուան բանտարկումն է։ ուրեմն ինչպէս ժողովուրդը զոհ մնայ ընդհանուր մոռացումի մը, վաղորդայնին հաւաքելիչ հեռապատկերը աչքերուն առջեւ տեսնելով։ Եւ սակայն պատրիարքը եթէ կարող է թո՛ղ ջնջէ իր պա-

հանձնումներն բանտարկեալներու ազատութեան խնդիրը ազգը իր ամբողջութեամբ պիտի բորբոքի:

Սուլթանը եւ իր կառավարութիւնը չեն կրնար նաեւ օսմանեան պետութեան ամէն կողմը, Պոլիսն ալ մէջ ըլլալով, Հայոց ազատ երթեւեկութեան արտօնութիւն տալ. ու պատրիարքը այդպիսի պահանջումի մը վրայ լըջօրէն պնդելու չի համարձակիր: Յիշեցնենք մօտաւոր անցեալը: Օսմանցիներուն Հայաստանի վրայ տիրապետութեան առաջին օրէն մինչեւ 1896 Հայերը կայսրութեան ամէն կողմը երթալու դալու ոգատ էին, երկրին ընդհանուր կանոններուն համաձայն. մեզի համար արգելիչ բացառութիւն մը ընել ո'չ ոք երեւակայած էր. ու Հայաստանցիները խմբովին Պոլիս կը վազէին առանց ո'ր քաղաքի: Ինչո՞ւ այդ քաղաքապետն ազատութիւնը ջնջուեցաւ: Յետոյ տիրապետութեան ամէն կողմը երթալու համար Հայերը զրեղծ պաշարումի վիճակի ենթարկելով Պոլսոյ կեդրոնական կառավարութիւնը պաշտօնապէս ինքնապաշտպանութեան միջոց մը ձեռք առաւ: Պատրիարքը յանձն կ'առնէ մատակցել կառավարութիւնը թէ ազատ երթեւեկութեան արտօնութիւնը տրուելէն անմիջապէս ետքը Պոլիս ծանր գէպքեր պիտի չպատահին, երկիրը նորանոր յուզումներ պիտի չպայթին: Բնաւ: Կառավարութիւնը ինչպէս ուրեմն ընդունի առաջարկներ ուրոնց հետեւանքներուն համար առաջարկութիւնը ներկայացնող պատրիարքը ինք երաշխաւոր ըլլալ չհամարձակիր: Ու պատրիարքը ինչպէս երաշխաւոր ըլլալ երբ ինքն ազգէն ո'ր եւ երաշխաւորութիւն չունի: Ահա անցեալին, ներկային, ապագային իրականութիւնը զոր իր արտաքին բուրք երեւոյթներէն մերկացնելով իր իսկական պարզութեանը մէջ ըմբռնելու ենք:

* * *

Ուրեմն, Պատրիարքը կարեւորութիւն ունեցող ո եւ է մէկ պահանջումին գոհացում ստանալու համար պէտք է նախ եւ առաջ անոնց հետեւանքներու նկատմամբ երաշխաւոր ներկայանայ. ու պատրիարքը յանուն ժողովրդին վստահօրէն ո'ր եւ ապահովութիւն տալու անկարողութեան դատապարտուած է: Ինչո՞ւ: Վասն զի յեղափոխական գաղափարը կը տիրապետէ, վասն զի յեղափոխական գաղափարը օրէ օր կը զօրանայ: Ինչո՞ւ Յեղափոխութեան հզօրացումը: Այս հարցին պատասխանի մենք չենք ի տար. պատրիարքարանին կէս դարու արձանագրութիւնները մենք շատ աւելի պերճախօս են. պատրիարքը անոնց թող դիմէ: Եթէ պատրիարքը եւ վարչապետը կարգան յորիմի պատերազմէն յետոյ մինչեւ Խզմիրեանի պատրիարքութիւնը Հայոց կեդրոնական պաշտօնատունէն Դրան մատուցուած թաքրիքները, անոնց մէջ կը գտնեն վերջին քսան տարուան յեղափոխական տագնապին ծագման վաւերական պատմութիւնը: Երբ 1870ին Խորիմեան Հայրիկին պատրիարքութեանը հարստահարութեանը խնդիրը պաշտօնապէս յուզուեցաւ, այսինքն՝ ա'լ համբերութեան չափը լեցուելով, հրապարակային բողոքարկութեան ժամը հնչեց, Ազգային ժողովէն ընտրուած Հարստահարութեանց քննիչ Յանձնաժողովը 1886էն մինչեւ 1870 Դրան մատուցուած թաքրիքները ամբողջապէս կարգաւորելու եւ քննելու ըստ այնմ անհրաժեշտ ապացոյցներու վրայ հիմնեց իր եզրակացութիւնները եւ պահանջումները:

Խորիմեան Հայրիկէն դատ ուրիշ երկու ժողովրդական պատրիարք ալ ունեցաւ ազգը, եւ երկուք ալ՝ անժողովրդական: Առաջինները՝ Ներսէս եւ Խզմիրեան՝ ճշմարտութիւնը կառավարութեան աչքին ծածկել չուզեցին: Ճշմարտախօսութիւնը գրաւականն էր սահմանադրութեան վրայ սուլթանին երկուքնցած իրենց հաւատարմութեանը: Միւս երկու անժողովրդականները՝ Յարութիւն Վահագնեան եւ Խորէն Աշրգեան՝ պատրիարքները, անոնք ալ ճշմարտութիւնը չսքօղեցին միշտ: Յարութիւն պատրիարք օր մը տարաւ սատարագամ Գեամիլ փաշային առջեւ լեցուց Ոսմանի դարաններէն ստացած ահաբեկ տեղեկագիրները: Աշրգեան պատրիարք 1890ին սկիզբները Երւազի պատար խրկեց այնքան խիստ ու ծանր տեղեկագիրներ ունց նրոմանը իրմէն առաջ ո'չ մէկ պատրիարք գրած էր:

Այսպէս ահա թէ՛ ժողովրդական եւ թէ՛ անժողովրդական պատրիարքները հաւասարապէս համերաշխ են իրենց բողոքարկութեանը մէջ:

Օրմանեան պատրիարք եթէ այդ քառասուն տարուան պաշտօնական գրութիւնները սուլթանէն նշանակուած Յանձնաժողովին առջեւ դնէ, կրնայ յայտարարել թէ ինչո՞ւ այսօր անկարող է ազգին հանդարտութեանը համար երաշխաւորել: Մինչեւ 1878 հայ ազգը իր տառապանքներուն վախճանը ուղղակի օսմանեան կառավարութեանէն ակնկալեց, իր պատրիարքներուն միջնորդութեամբ: Յետոյ սահմանութիւնը զինքը մզեց Եւրոպայի գիմելու. եւ 1880 էն յետոյ, հարստահարութեանց սաստկացումէն ծնալ յեղափոխական շարժումը որ ազգային ինքնապաշտպանութեան վերջին ապաւենը համարուեցաւ եւ կը համարուի: Այժմ հայ ազգը համոզուած է թէ զինքը ջնջելու քաղաքականութիւնը վերջնապէս գծուած է, հետեւաբար իր գոյութեանը համար պէտք է կռուի, որքան ատեն որ իր թշնամին զինաթափ չէ եղած: Պատրիարքին պարտականութիւնը արդի կացութիւնը իր պատմական ծնունդովը ուսումնասիրելու եւ ճշմարտութիւնը ամբողջապէս ներկայացնելու մէջ կը կայանայ:

Աշրգեան պատրիարք 1890ին Մուսա պէյի դատէն եւ Էրզրումի ջարդէն յետոյ բողոքախառն հրաժարականով մը պահանջումներ բրաւ, բայց միանգամայն պաշտօնը շարունակելու տկարութիւնը ունեցաւ, որով իր բողոքին կարեւորութիւնը տկարացուց, եւ պահանջումներուն անհրաժեշտ պէտքը անզգայի ըրաւ: Ազգային պատմութիւնը տարբեր էջեր պիտի արձանագրէր եթէ Խորէն պատրիարք առանց վարանելու առանձնաճանաչ իր բնականաբար: Տասը տարի ետք Օրմանեան պատրիարք ալ կը պարտաւորուի նմանօրինակ ընթացքի մը հետեւիլ. բողոքախառն պահանջադիր մը մատուցանելով Երւազին, պատրիարքարանէն կը քաշուի: Աշրգեանին տկարութիւնը պիտի ունենայ: Հաստատական կամ ժխտական պատասխան մը անկարելի է տալ: Պատրիարքը զեռ կարող է իր մեծամեծ սխալները շակել եթէ առժամապէս բուրբուլին ձեռնարկի ըլլալով գործերէն, բաւականանայ կէս դարուն պատմութիւնը ներկայացնել սուլթանին կազմած Յանձնաժողովին, եւ կա'մ ազգին համար վաղուան ապահովութիւնը պահանջել, կա'մ հրաժարիլ: Իր պարտականութիւնը կատարած կ'ըլլայ: Վաղուան ապահովութիւն, ահա՛ ինչ որ պէտք է մեզի, եւ ո'չ թէ կարկտան, կտոր-բրդած սնորհիւնութիւններ որոնք մէկ ձեռքով կը տրուին եւ միւսով ետ կ'առնուին:

ԱՋԳԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱՆԻ ՌԵԺԻՏԵՐ

Մեր ընկեր Միհրան Տաճարեան՝ Պերճ մարտահանին բողոքով քանի մը շաբաթ առաջ Ներշնչումներ ազգային եւ յեղափոխական արդի կեանքի վերնագրին տակ հատոր մը հրատարակեց Գահիրէ: Հաւաքածոյ մըն է 1889էն 1899 զանազան վայրեր օրուան ազգեցութեան ներքեւ գրուած ոտանաւորներու: Պերճ ականատես վկայ Հայաստանի տառապանքներուն, որոնց դարմանին համար սրապէս յեղափոխական վարիչ Սառուն էր սլացած, կ'երդէ կիւրաբար, Զուլ կէտուկի կոխը, Պերճոց քաջութիւնը, Յորճոցարը, Վարդենիսի կիներ, Տաւրիկցի կարիճը: Հայրենիքին նոր «համով-հոտով» են Ներշնչումները: Հեղինակը Հայաստանի Հայոց հաւատքը, սիրտը, քաջութիւնը, արտօնութիւնը, սարսաղագեցիկ շեշտներով կը հնչեցնէ ու սրտերը թունդ կը հանէ: Պիտի ըսէինք թէ՛ «Մեծ հաճոյքով կը կարգացունէ այդ տողերը», եթէ ներքի ըլլար հրճուանքի զգացում արտայայտող բացատրութիւն մը՝ արեւմտ յիշատակներու թողած արեւալուրդութեանը յատկացնել. բռնեք ուրեմն՝ խորին յուզումով կը կարգացունէ: Փորձը ամէն հայ թո՛ղ իր սրտին վրայ ընէ:

* * *

Պ. Վ. Շահէնի, որ արդէն հասարակութեան ծանօթ է իր յօդուածներովը, եւ Նոր կեանքի մէջ Պարսկաստանի Հայոց վրայ իր գեղեցիկ ուսումնասիրութեամբը վերջերս Պատկերներ մէր կեանքէն անունով հատորիկ մը հրատարակեց Ամերիկա: Այդ տետրակին մէջ չորս պատկերներ ամփոփուած են: Հարկահաններ, Մամէ (բրդական կեանքէ), Պարկ մը ցորեն, Պուտ մը արին: Վաստակաւոր կեանքը կը պատկերացնեն աչքերնու առջեւ, տխուր խոհերու մէջ կը խորասուզեն մեզի, եւ ամէն սրբտեղէ «ալ չի բաւեր» կը խլեն: Յեղափոխութիւնը հրաշքոյ շունչ մը այդ Պատկերը:

* * *

Ստացանք Նիւ-Եորը հրատարակուիլ սկսած Չայն Հայրենեաց շաբաթահանդէսին առաջին թիւերը: Այս նոր թերթը նախկին Տիգրիսը կը փոխանակէ: Խմբագրներն են՝ մեր ընկեր Գարեգին Չիթճեան, եւ Արմենական Պ. Վ. Շահէնի: Ուրախ ենք տեսնելով որ երբեմն իրարու թշնամի Հնչակեանները եւ Արմենականները այսօր միեւնոյն զգացումներով ոգեւորուած, միեւնոյն դադափարներով տողորուած միասին կ'աշխատակցին: Հրատարակչական ընկերութիւնը՝ որունն է այս թերթը, կ'ազդարարէ թէ Չայն Հայրենեացը ո'ր եւ կուտակցութեան չի պատկանիր: Ինչպէս կը տեսնուի նշանակուած խմբագրներէն թերթը միութեանական գոյն ունենալու է: Առաջին թիւերէն լաւ տպաւորութիւն կրեցինք: Կրակոտ շունչ մը կը փչէ, ու ըլլախո՛հ մտածութեամբ ժողովրդին բարոյական եւ տնտեսական պէտքերը կ'ուսումնասիրէ եւ Ամերիկայի հազարաւոր պանդուխտ Հայոց վիճակը բարուրելու կ'աշխատի: Չայն Հայրենեացը հայրենիքի ցաւերուն ձայնը պիտի հնչեցնէ ամէն Հայոց սրտին խորը, եւ յոյսի, քաջալերանքի, ապագայի հաւատքի փրկարար ձայնն ալ պիտի հնչեցնէ անդին, հայրենիքի սրտին:

Ն Ո Ւ Ի Ր Ա Տ Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն

Կոռուակցութեան կեդրոնական Սեռնոյն ստացուած են հետեւեալ նշանակաւոր անունները:

Վահագն Մարկոսեանէ՝ 338 ֆրանք:

ՆՈՐ ԿԵԱՆՔ

Բաժանորդ գրուիլ ուզողները կրնան գիմել Նոր կեանքի հասցէին (Լ. Ֆրանք, 32, Չեսթերտոն Բօւտ Լոնտոն, W.), գրելով իրենց բաժնեկիւնը, կամ գիմել իւրաքանչիւր քաղաքի Հնչակեան մասնաճիւղին ու անոր յանձնել գրամը:

ՄԵՐ ՀԱՍՅԷՆ Է

L. FRANK,
32, CHESTERTON ROAD,
(ENGLAND) LONDON, W.

ՏՊԱՐԱՆ ՀՆՁ. ԱՋԳ. ՅԵՂ. ԿՈՒՍԱՆՑՈՒԹԵԱՆ